ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 92-Ա « 12 » հունվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի Հ.1902-Ա, 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի Հ.3645-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի Հ.3632-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով, հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի 06.10.2025թ. տրված հ.Կ-06102025-01-0076 որոշումը.

1. Երևանի քաղաքապետի 2020 թվականի հունիսի 22-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը պետական գրանցման ներկայացնելու մասին» հ.1902-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ուժը կորցրած ճանաչել Որոշման հավելվածի 14-րդ կետը,

2) Որոշման 2-րդ կետից հանել «և 14» բառերը:

2. Երևանի քաղաքապետի 2024 թվականի սեպտեմբերի 24-ի «Ինքնակամ կառույցի օրինականացման մասին» հ.3645-Ա որոշման 4-րդ կետում «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Հայկ Մուրադյանին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

3. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի «Երևանի քաղաքապետի 2024 թվականի սեպտեմբերի 24-ի հ.3645-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» հ.3632-Ա որոշումը:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ